

ԱՐՄԵՆ ԱՐԳԱՐՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԸ

ԺԹ. դարի երկրորդ կեսի հայ մտավոր կյանքի զարգացման ընթացքը անկարելի է պատկերացնել առանց մեծ բանասեր, բանահավաք, ազգագրագետ Գարեգին Սրվանձտյանցի (1840-1892): Նշանավոր ազգային, հասարակական ու գրական գործիչն իր նախնական կրթությունը ստացել է ծննդավայր Վանում, այնուհետև Վարազա վանքի ժառանգավորաց դպրոցն ավարտելուց հետո կարգվել է վանքի ուսուցիչ: Եղել է «Արծուի Վասպուրական» թերթի խմբագրի տեղակալ: Այս պարբերականում են լույս տեսել ազգային-ազատագրական գաղափարներ արծարծող նրա անդրանիկ հոդվածները: Նա «Վարդ» գրական ամսուով թղթակցել է Կ. Պոլսի, Զմյուռնայի և Թիֆլիսի մի շարք պարբերականների («Մասիս», «Արևելեան մամուլ», «Կռունկ Հայոց աշխարհի», «Մեղու Հայաստանի» և այլն), որոնցում տպագրված իր ակնարկներում ճշմարտացիորեն նկարագրել է այլազգի և սեփական հարստահարիչներից հայ աշխատավորության տառապանքները, ինչը չի վրիպել թուրքական կառավարության ուշադրությունից, և նա դրվել է գաղտնի հսկողության ներքո: 1867թ. Գ. Սրվանձտյանցը Կարինում ձեռնադրվել է վարդապետ և ուղարկվել Վան, որպես քարոզիչ: Նա 1872թ. մասնակցել է Վանում կազմակերպված «Միություն ի փրկություն» ազգային-ազատագրական խմբակի ստեղծմանը: Գ. Սրվանձտյանցը բոլորովին հայ գրականություն է մտել հայրենասիրական շնչով ստեղծագործած «Ողբերգութիւն մեծին Սահակայ Պարթևի և անկումն Արտաշրի Արշակունւոյ» ու «Շաւարշանա» (1860-1870-ական թվականներին գրված) թատերական երկերով:

Ռուս-թուրքական՝ 1877-1878թթ. պատերազմից հետո Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանի հատուկ կոնդակով գործուղվել է շրջելու «ի բնագաւառս մայրենի և տեղագրել զամենայն ամենայնի»: Եղել է հայաբնակ բազում մեծ ու փոքր քաղաքներում ու բնակավայրերում, ծանոթացել ժողովրդի կյանքին ու կենցաղին, գրի առել ժողովրդական բանավոր ստեղծագործության լավագույն նմուշները, սովորությունները, ծեսերը, հավատալիքները: Ժողովրդանվեր գործիչը 1879-1881թթ. եղել է Վանի վիճակավոր՝

հոգևոր առաջնորդի (թեմակալի) փոխանորդ-օգնականը, մասնակցել «Սև խաչ» հայրենասիրական գաղտնի կազմակերպության աշխատանքներին:

Կառավարության ցուցումով 1881թ. Գ. Սրվանձտյանցը հեռացվում է Վանից, որոշ ժամանակ վիճակավոր առաջնորդի պաշտոն վարելով Բաղեշում, ապա՝ Խարբերդում:

Էջմիածնում 1886թ. եպիսկոպոս օծվելուց հետո Սրվանձտյանցը նշանակվել է Տրապիզոնի, այնուհետև Տարոնի վիճակավոր առաջնորդ, միաժամանակ՝ Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր: Գ. Սրվանձտյանցի քարոզչական-հայրենասիրական եռանդուն գործունեությունը հարուցում է սուլթան Աբդուլ Համիդի դժգոհությունը: Պատրիարքի հրամանով, որպես քաղաքականապես անբարեհույս մարդ, Գ. Սրվանձտյանցը պաշտոնաթող է արվում և ուղարկվում Կ. Պոլիս, որտեղ խիստ հսկողության պայմաններում աշխատում է իբրև Բերայի Ս. Երրորդություն եկեղեցու քարոզիչ և վարում Կրոնական Ժողովի ատենապետի պաշտոնը: Գ. Սրվանձտյանցը պատասխանատվության մեծ զգացումով է մերժեցել անցյալի ժառանգությանը՝ ըստ ամենայնի գնահատելով պատմության ժառանգությունը կարևորելու արդիականության պահանջը: 1874թ. լույս տեսած «Գրոց ու բրոցի» ամենամեծ արժանիքներից մեկն այն է, որ նրան միակցել էր հայ ժողովրդական էպոսի՝ «Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ» խորագրով հավելվածը: Է. Կոստանդյանի դիտարկմամբ՝ հայ ժողովրդական էպոսի գոյության մասին գիտեին ժամանակի մտավորականներից շատերը, քանզի այն բերանացի պատմվում էր ժողովրդի մեջ, սակայն ոչ ոք գրի չէր առել էպոսը: Հանգամանքների բերումով, - շարունակում է պատմաբանը, - անընդհատ պաշտոնավարելով Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում՝ Գ. Սրվանձտյանցը նույնպես լուրեր է ստանում հայ ժողովրդական վեպի գոյության մասին: Եւ նրա համառ որոնումները տալիս են իրենց արդյունքը: 1873թ. հուլիսին Մշո դաշտի Առնիստ գյուղի երեսփոխան Կրպոն ներկայանում է Գ. Սրվանձտյանցին և պատրաստակամություն հայտնում՝ պատմելու իր իմացած տարբերակը: Կրպոյի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ վեպի մասին իր վարպետն իմացել է ավելի ընդարձակ և պատմել է այն մեջընդմեջ երգելով: Նա ունեցել է երկու ոշտունցի աշակերտ, որոնք կատարելապես սովորել էին պատմությունը: Կրպոն հաղորդում է, որ ինքը, երկար ժամանակ պատմած չլինելու պատճառով, շատ կտորներ մոռացել է: Գ. Սրվանձտյանցը երեք օր պահում, կազդուրում է Կրպոյին, հետո գրի առնում նրա պատմածը կատարյալ հարազատությամբ¹:

Հետագայում, երբ գրի են առնվում էպոսի բազում պատումներ, պարզվում է, որ «Գ. Սրվանձտյանցի գրի առածը ունի իր ուրույն տեղը: Այն աչքի է ընկնում կատարելությամբ, գրառման հարազատությամբ: Պատումի համար

1 Տե՛ս Է. Ա. Կոստանդյան, Գարեգին Սրվանձտյանց, Երևան, 1979, էջ 58-59:

գրված սեղմ առաջաբանը բացահայտում է Գ. Սրվանձտյանցի բանասիրական ունակությունները: Նա հմտությամբ գատում է վեպում գոյություն ունեցող պատմական-իրական և առասպելական տարրերը»²: Գ. Սրվանձտյանցը գատում և տարբերակում է իրար խառնված նախաքրիստոնեական և քրիստոնեական նստվածքները, գտնում, որ ճիշտ չէ Սանասարի և Աղբամեղի ժամանակ հայերին խաչապաշտ ներկայացնելը: Բարձր է Գ. Սրվանձտյանցի տված գնահատականը ժողովրդական վեպին: Ըստ նրա՝ «Ամբողջ այս գրոյցքը նկարագիր է քաջութեան, ընտանութեան, բարեպաշտութեան և պարզ ու անխորամանկ յարաբերութեան Դաիթին՝ ... իւր ախոյեանին հետ»³:

Ուշագրավ են նաև Գ. Սրվանձտյանցի գնահատական-մեկնաբանությունները էպոսում հանդիպող աշխարհագրական անունների վերաբերյալ, որոնք շատ բարձր է գնահատել ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը⁴:

Գ. Սրվանձտյանցը առաջինն էր, որ «Սասնա ծռեր» վեպը համարեց ժողովրդի, առավելապես գյուղացիության կյանքի արտացոլումը:

Հայ ժողովրդական էպոսի առաջին պատումը մեծ խանդավառությամբ, հիացմունքով ընդունվեց ժամանակի հայ գիտական մտավորականության կողմից: Մոսկվայից ու Պետերբուրգից, Թիֆլիսից ու Զմյուռնայից, Կ. Պոլսից ու Վիեննայից նրանք դրվատեցին Գ. Սրվանձտյանցի գիտական սխրանքը: Պետերբուրգից Գր. Խալաթյանցը Գ. Սրվանձտյանցին հայտնում է իր և Մկրտիչ Էմինի՝ ժողովրդական վեպի հանդեպ ունեցած անսահման հետաքրքրությունը, միաժամանակ հայտնելով Մ. Էմինի պատրաստականությունը՝ իր վրա վերցնել հրատարակչական բոլոր ծախսերը՝ «Սասունցի Դավթի» վերաբերյալ նոր արժեքավոր նյութեր տրամադրելու դեպքում:

Գ. Սրվանձտյանցի գրի առած «Սասունցի Դավթի» առաջին այդ պատումը Գր. Խալաթյանցը թարգմանում է ռուսերեն և հրատարակում⁵: Հայ ժողովրդական բանահյուսության այդ բարձրարժեք ստեղծագործությունը երրորդացի ընթերցողին ծանոթացնելու նպատակով Աբգար Հովհաննիսյանն այն թարգմանում է գերմաներեն: Ականավոր մանկավարժ և հասարակական գործիչ Սեդրակ Մանդինյանը, գիտակցելով էպոսի հայրենասիրական վիթխարի նշանակությունը աճող սերնդի դաստիարակության գործում, պատումը փոխադրում է արևելահայերենի և «Ազգային դյուցազնական աշխարհ» խորագրի ներքո մտցնում իր կազմած դասագրքերի մեջ:

«Գրոց ու բրոցի» ջերմ ընդունելությամբ ոգևորված և վայելելով ժամանակի հայ լուսավորական կենտրոնների բարոյական ու նյութական աջակցությունը՝ Գ. Սրվանձտյանցը, նույն 1874 թ. հրատարակում է երկրորդ ժողո-

2 Անդ, էջ 58-59:

3 Գ. Սրվանձտյանց, Գրոց ու բրոց, Կ. Պոլիս, 1910, էջ 83:

4 Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 333:

5 Տե՛ս “Журнал Министерства народного просвещения”, СПб., 1881, ноябрь, էջ 51-58:

վածուն՝ «Հնոց և նորոց» խորագրով, որը հիմնականում կազմված է գրավոր աղբյուրներից: Արժեւորելով Հայաստանի գրեթե բոլոր վանքերում ցրված ձեռագիր մատյանները հայոց պատմության տարբեր դարաշրջանների լուսաբանման գործում, հանդես բերելով խոհեմ պատմաբանին հատուկ սրտացավություն անցյալի այդ արժեքների հանդեպ՝ Գ. Սրվանձտյանցը ցանկանում էր՝ «իցե զի ընկերանային բանասերք ազգայինք կարողագոյնք, որոց գործ և նպատակ լինէր հաւաքել և տպագրել տալ զանտիպ մնացեալ մատենագիրս...»⁶:

Ձեռագիր հիշատակարանների և մատյանների նկատմամբ ուշադրությունն ու հոգատարությունն ուղեկցել է Գ. Սրվանձտյանցին իր ողջ գործունեության ընթացքում: «Թորոս աղբարի» մեջ ևս նա անդրադառնում է այդ խնդրին՝ առաջարկելով Կ. Պոլսում ստեղծել մի ընկերություն, որի նպատակը լինէր ձեռագրերի որոնումը, հավաքումն ու հրատարակումը: Նա առաջարկում էր այդ նպատակով Էջմիածնի, Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի և Արմաշի ձեռագրատների կողքին հաստատուն դարձնել Կ. Պոլսի Ղալաթիո մատենադարանը, որը մեծ գործ կարող էր կատարել գավառների հետ հարաբերություն պահպանելով և նույնիսկ ձեռագրեր հայթայթելով արտագաղթողներից:

«Հնոց և նորոց» ժողովածուն ունի աղբյուրագիտական մեծ արժեք: Ժողովածուի առաջաբանում Գ. Սրվանձտյանցը հանգամանորեն պատմում է այն ժամանակների մասին, երբ քուրդ ցեղապետերը ստեղծել էին կենտրոնական կառավարությունից անկախ իրենց իշխանությունը և իբրև խաֆիրներ հպատակեցրել էին տեղի հայ ու քուրդ բնակչությանը և տուրք էին գանձում նրանցից: Առաջաբանը գրված է գրաբար: Գ. Սրվանձտյանցի ստեղծագործությունների մեջ ուրույն տեղ ունի «Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ» երկհատոր ժողովրդագրական աշխատությունը⁷, որի մեջ ամփոփված են 1878-1879թթ. Արևմտյան Հայաստանի մի շարք նահանգները շրջագայելու ժամանակ ստացած տպավորությունները: Այստեղ Գ. Սրվանձտյանցը կոչ է անում, հորդորում բոլոր նրանց, ովքեր հեռացել են հայրենիքից, վերադառնալ, վերածնել պապերից և հայրերից ժառանգություն մնացած երկիրը, քանզի հայը Հայաստանի հողի վրա է իրեն մարդ զգում⁸: Հեղինակի հայրենասիրությունը հասնում է կիզակետին, երբ նկարագրում է Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը, Մաշտոցի կատարած ազգափրկիչ գործը, Եղիշեին ու նրա պատմությունը, Ներսես Շնորհալուն և նրա ծննդավայրը: Գ. Սրվանձտյանցը հայոց անցյալի փառքին հակադրել է ներկայի թշվառ կացությունը՝ զուրկ լուսանշմար գալիքի ամենափոքր հեռանկարներից անգամ:

6 Գ. Սրվանձտյանց, Հնոց ու նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 20-21:

7 Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ, մ.-Ա., Կ. Պոլիս, 1879, մ.-Բ., Կ. Պոլիս, 1884:

8 Տե՛ս Է. Ա. Կոստանդյան, նույն տեղում, էջ 78:

Գ. Սրվանձտյանցի գրիչը մորմոքում է ընթերցողի սիրտը, երբ նկարագրում է իրօրյա թուրք և քուրդ բեյերի շահատակությունները, ավագակապետության թողտվությունն այդ բոլորի գոհին՝ քրիստոնյա ռայային, որն ստիպված բռնում է արտագաղթի ուղին: Իր աշխատության մեջ Գ. Սրվանձտյանցը խարազանում է նաև եվրոպական տերություններին ու նրանց գործակալներին, նրանց տեղական սպասարկուներին, որոնք անձնական բարեկեցության համար գնում էին ցանկացած ստորության: «Թորոս աղբարում» Գ. Սրվանձտյանցը, սակայն, ժողովրդին տակավին ըմբոստության կոչ չի անում: Նա այն պատրանքաշատ կարծիքն ունեւ, թե բոլոր այդ հարստահարությունները ոչ թե կառավարության հրահանգով են կատարվում, այլ ինքնագլուխ պաշտոնյաների միջոցով: Չարիքի պատճառի վերացման մեջ չկողմնորոշվելու՝ Գ. Սրվանձտյանցի այդ պահի միտվածությունը, սակայն, չպետք է խանգարի մեզ արժեւորելու նրա անգնահատելի ծառայությունը: Նրա լուսավորական, գրական, գիտական գործունեությունը եղավ հայ ժողովրդին ծառայելու վեհ նվիրում: Նա այն համոզմունքն ունեւ, որ պետականությունից գուրկ հայ ժողովրդի համար լուսավորությունը հոգևոր հզոր գենք է հայապահպանության համար մղվող պայքարում, մի քայլ դեպի ազգային-ազատագրական շարժումը: Ժողովրդին լուսավորելու ուժգին տենչով, պահի հրամայականով Գ. Սրվանձտյանցը դարձավ ուսուցիչ, խմբագիր, գրող, բանահավաք, ազգագրագիր: Նա եղավ լուսավորիչ և գիտնական Օսմանյան կայսրության դժնի պայմաններում, երբ վտանգված էր արևմտահայության ֆիզիկական գոյությունը: Գ. Սրվանձտյանցի գործունեությունը, նրա գրական և գիտական ժառանգությունը իր ապրած ժամանակաշրջանի հայ հասարակական մտքի առաջավոր գործիչների արժարժած հայրենասիրական և ազգային-ազատագրական գաղափարների յուրովի արձագանքն է:

Գ. Սրվանձտյանցը Հայոց հարցի վերաբերյալ տարբեր առիթներով արտահայտել է իր ինքնատիպ տեսակետը: Նա միշտ թերահավատորեն և քննադատորեն է վերաբերվել ոչ միայն արևմտյան տերությունների, այլև Ռուսաստանի կողմից հայկական հարցի լուծման ուղղությամբ արված հայտարարություններին ու խոստումներին: Նա Ռուսական կայսրությանը հայ ժողովրդի «բարեկամ» չի համարել: Բնավ պատահական չէ, որ մահվանից մեկ տարի առաջ՝ 1891 թ., նա գրել է. «Մենք միշտ կկասկածիմք, թե բռնաբարություն մեր նամակները, թե այստեղ և թե այդ տեղը (նկատի ունի ռուսական տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանը - Ա.Ա.), զի մեր գործոց և գրուածոց վրայ խիստ հսկողություններ կան: Պոլիսը շատ փոխում է մանասանդ վերջերս, ինչ որ հայկական է՝ թե կրօնական և թե կրթական, այս և այդ պետութեանց համար միևնույն քաղաքականութեան ենթարկեալ է. և

իրարու կօժանդակեն, իրարու իմաց կուտան, և միօրինակ կը գործեն»⁹: Մեջբերումից դուրսին է նկատել, որ Գ. Սրվանձտյանցը շատ լավ էր հասկանում ցարիզմի քաղաքականությունը հայ ժողովրդի ազատագրական ձգտումների նկատմամբ: Ըստ Գ. Սրվանձտյանցի՝ ազգի հավաքական միասնության և միասնական գործելու մեջ է հաղթանակի գրավականը: Հայ ժողովուրդն ազգովին պետք է գիտակցի, որ «այդ կեղծ բարերարները... աւելի ճարպիկ որսորդներ ու մսագործներ» են, որ նրանք ցանկանում են ի վերջո «սպանդ մատուցանել»¹⁰: Հույս չդնելով երուպական տերությունների և Ռուսաստանի առաքելության վրա՝ Գ. Սրվանձտյանցը Արևմտյան Հայաստանի և ընդհանրապես հայ ժողովրդի ազատագրությունը կապում էր միայն ու միայն ազգի համախմբման և ինքնապաշտպանության հետ¹¹:

РЕЗЮМЕ

Процесс развития армянской интеллектуальной жизни во второй половине 19-го века невозможно представить без филолога, фольклориста, этнографа Гарегина Сrvандзтянца (1840-1892). С большим чувством ответственности относился Гарегин Сrvандзтянец к наследию прошлого, по-видимому, оценивая современное требование к важности исторического наследия. Он был одним из первых исследователей, рассматривающих роман «Неистовые сасунцы» преимущественно как отражение жизни крестьянства. Произведения Гарегина Сrvандзтянца знакомят с прошлым и настоящим Армении, вызывают чувство гордости за творческие способности армянского народа. Патриотизм автора достигает своего апогея при описании деяний Месропа Маштоца, направленных на спасение народа, его гробницы, Егише и его истории, Нерсеса Шнорали и места его рождения. Гарегин Сrvандзтянец противопоставил былую славу Армении современному ему бедственному положению, лишенному даже самой малой перспективы. Его образовательная, литературная, научная деятельность стала благородным примером преданного служения народу.

SUMMARY

It is impossible to imagine the armenian intellectual life of the second half of the 19th century without the philologist, folklorist, ethnographer G. Srvandztyants

9 ԳԱԹ, Պ. Սիմոնյանի ֆոնդ, գ. 68բ:

10 Տե՛ս Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, Հայաստանի ճամբորդ, մ-Բ., էջ ԺԷ.:

11 Տե՛ս Է. Ա. Կոստանդյան, նշվ. աշխ., էջ 139:

(1840-1892). Garegin Srvandztyants had a great sense of responsibility towards the heritage of the past, apparently appreciating the historical heritage importance requirement of modernity. He was the first among the researchers who considered «Sasna tsrer» novel to be the life reflection of the people, especially of peasantry. Through G. Srvandztyants's works we get acquainted with the past and the present of Armenia and are proud of the creative ability of the armenian people. The author's patriotism reaches its zenith when describing the problem of the nation's saving work of Mesrop Mashtots and his tomb, Yeghishe and his history, Nerses the Graceful and the place of his birth. C. Srvandztyants contrasted the past glory with the present miserable situation, devoid of even the smallest prospects. His educational, literary, scientific activity was an elevated commitment to serve the nation.